

ՆՎԻՐՅԱԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻՆ

Լրացավ Մայր Աթոռի գլխավոր ճարտարապետ Արծրուն Գալիկյանի ծննդյան 80 տարին, որից ուղիղ 35 տարի նա նվիրել է Վեհափառ Հայրապետ Վազգեն Առաջինի շինարարական մեծածավալ ծրագրերի իրականացմանը:



Ծնվել է Վան քաղաքում 1912 թ. սեպտեմբերի 8-ին: Հայրը՝ Գաբրիելը, հմուտ ատաղձագործ էր, իր արհեստում ճանաչում ստացած արհեստավոր: 1915 թ., բախտակից լինելով եղեռնի սերնդի դառն ճակատագրին, երեք տարեկան մանուկը ընտանիքի հետ միասին անցավ գաղթի մահաբեր ճանապարհներով ու հանգրվանեց Երևանում:

Այստեղ էլ նա ստացել է իր միջնակարգ և բարձրագույն կրթությունը: Միջնակարգ դպրոցն ուսանելիս (որն ավարտել է 1929 թ.), նա միևնույն ժամանակ նկարչական կրթություն է ստացել Երևանի Գեղարդտեխնիկումում: Մեկ տարի գյուղական ուսուցչի պաշտոն վարելուց հետո, նա 1931 թ. իր ուսումնառությունը շարունակել է Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտի շինարարական ֆակուլտետի ճարտարապետական բաժնում, որը գերազանց դիպլոմով ավարտել է 1937 թ.: Տակավին ուսանող տարիներին, սկսված 1934 թ., նա նաև աշխատել է Երևանի և Մոսկվայի ճարտարապետական արվեստանոցներում, փորձառու ճարտարապետների ղեկավարությամբ՝ կատարելով ճարտարապետի օգնականի պարտականություն:

Ինստիտուտն ավարտելուց հետո աշխատանքի է անցել «Հայարդնախագիծ» ինստիտուտում, որտեղ նախագծել է տպարանի շենքեր՝ Երևանում և Կիրովականում կառուցելու համար, մի քանի արտադրական շենքեր՝ համար 447 գործարանի (այժմ՝ Հայէլեկտրո գործարան) ընդհանուր համալիրում:

Սակայն կարճատև եղավ ճարտարապետ Արծրուն Գալիկյանի գործունեությունը իր նախասիրած բնագավառում: 1941 թ. պայթեց երկրորդ աշխարհամարտը, իսկ 1942 թ. փետրվարին նա զորակոչվեց բանակ: Լեյտենանտի պաշտոնով, 409 հայկական դիվիզիայի կազմում, նա մասնակցեց մարտական թեժ գործողությունների ու նույն տարին շրջափակման մեջ ընկնելով՝ գերեվարվեց:

Դրանով սկզբնավորվեց Արծրուն Գալիկյանի ոդիսականը: Գերմանական մեկ ճամբարից մյուսը փոխադրվելով, նա «վայելեց» դրանց ողջ դառնությունները, հյուծվեց, ուժասպառ եղավ, բայց հրաշքով կենդանի մնաց:

Բայց ոդիսականը վերջ չունեցավ: Երբ պատերազմի ավարտից հետո ինքնակամ հայրենիք վերադարձավ, ոդիսականը շարունակվեց: «Հայրենիքի դավաճանի» ստահոդ պիտակով «պարգևատրվեց» 10 տարվա բանտարկության ու այս անգամ հեռավոր աքսորավայրերում «վայելեց» դրանց դառնությունները, թեև՝ ինչպես Լվովում, այնպես էլ հեռավոր հյուսիսային Նորիլսկ քաղաքում, օգտագործվեց իր մասնագիտությամբ: 1949—1957 թթ. Նորիլսկի կալանավայրում նա սկզբում աշխատել է որպես շինարարության պետ և գլխավոր աշխղեկ, իսկ դրանից հետո, սկսած 1951 թվականից մինչև ազատվելը, որպես հեղինակ-ճարտարապետ՝ տեղի նախագծային ինստիտուտում:

Բախտավոր դիպվածով նա հանդիպեց իր ուսուցիչներին՝ ճարտարապետներ Գևորգ Քոչարին և Միքայել Մազմանյանին, որոնք այս հեռավոր աքսորավայրն էին ընկել դեռևս 1937 թ. ու դրա հատակագծման ու կառուցապատման հեղինակները եղան: Աշխատակցությունը իր ուսուցիչների հետ բախտորոշ եղավ ճարտարապետ Արծրուն Գալիկյանի համար, նախ այն կապակցությամբ, որ վերստին հնարավորություն ստացավ անցնելու իր մասնագիտությանը՝ ճարտարապետական նախագծմանը, ապա աքսորից ազատվելուց և 1957 թ. Երևան վերադառնալուց հետո, Միքայել Մազման-



Նոր վեհարան—նախասրահ վերակառուցումից հետո

յանի (որը մեկ տարի առաջ էր վերադարձել Երևան) միջնորդությամբ, ճարտարապետի պաշտոնով աշխատանքի անցավ Մայր Աթոռում:

Վեհափառ Հայրապետ Վազգեն Առաջինը դեռ նոր էր արժանացել Լուսավորչի գահին նստելու բարձր պատվին ու ծրագրում էր խորհրդատու՝ ճարտարապետական հանձնաժողովի (որի նախագահն էր Միքայել Մազմանյանը) օգնությամբ ծավալել իր եկեղեցաշեն բեղմնավոր գործունեությունը:

Իրեն վստահված բնագավառում փորձառու, պաշտոնում պարտաճանաչ, ազնիվ ու կարգապահ ճարտարապետ Արծրուն Գալիկյանը ահա երեք ու կես տասնամյակ աշխատում է Մայր Աթոռում՝ բծախնդրորեն կատարելով իր պարտականությունը և՛ որպես նախագծող ճարտարապետ, և՛ որպես շինարարության ընդհանուր ղեկավար: Նրա անունը կապված է շատ կարևոր իրագործումների հետ՝ Հին և Նոր Վեհարանների հիմնական վերանորոգման ու բարեզարդման, Մայրավանքի արևելյան և հյուսիսային դարպասների նախագծման ու կառուցման, Ղազարապատ կոչված շենքի ար-



Հուշարձան—նվիրված Մեծ եղեռնի և հայրենական պատերազմի զոհերին, նախագծված և կառուցված 1981 թ.

մատական վերակառուցման, դրանցում միաբանական սեղանատան և հանրակացարանի (երկրորդ հարկում) ստեղծման, տպարանի շենքի նորոգման ու երկրորդ հարկի հավելման, ճեմարանի շենքի նոր մասի հավելման, Երևանի Սուրբ Սարգիս եկեղեցու հիմնական վերակառուցման ու բարեզարդման (ճարտարապետ Ռ. Իսրայելյանի հետ) և ուրիշ շատ ու շատ գործեր: Դրանցով նա իր անունը առհավետ կապեց Մայր Աթոռի արժանահիշատակ շինարարական գործունեության պատմության հետ, բարի հիշատակ թողեց:



Օնկոլոգիական դիսպանսերի գլխ. շենքը նախագծված և կառուցված Երևանում 1967—1970 թվերին



Նախիջևանում կառուցված բնակելի շենք, 1939 թ.

Հիմնականում աշխատելով Մայր Աթոռում, նա ժամանակ հատկացրեց նաև իր մասնագիտությամբ ծառայելու համար մայրաքաղաքին: «Հայարդ» նախագիծ ինստիտուտում համատեղության կարգով աշխատելով (1966—1968 թթ.), նրա կազմած նախագծով Քանաքեռի տարածքում կառուցվեց շատ կարևոր բուժական հիմնարկի՝ ուռուցքաբանական հիվանդանոցի ընդարձակ համալիրը:

Ու առաջացած տարիքում նույնպիսի նվիրումով ու անսպառ եռանդով ճարտարապետ Արծրուն Գալիկյանը, գործարար վանեցին, շարունակում է ծառայել իրեն վստահված չափազանց կարևոր ու պատվաբեր բնագավառին:

Մեր գնահատանքի խոսքը մատուցենք, ուժ ու արևշատություն մաղթենք նրան:

ՊՐՈՖԵՍՈՐ ՎԱՐԱԶԴԱՏ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Նախագահ Մայր Աթոռի ճարտարապետական
հանձնաժողովի

Ճարտարապետ Ա. Գալիկյանի ծննդյան 80-ամյակի առթիվ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը տվեց իր հայրապետական հետևյալ կոնդակը.

ՄԵԾԱՅԱՐԳ ՏԻԱՐ ԱՐԾՐՈՒՆ ԳԱԼԻԿԵԱՆԻՆ ՀԱՐԱԶԱՏ ՈՐԴԻՈՅ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ ՈՂՋՈՅՆ ՀԱՅՐԱԿԱՆ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ

ԵՐԵՒԱՆ

Ողորմութեամբն բարձրեալն Աստուծոյ Հայոց մայր դաստիարակ Եկեղեցին տասնեօթը երկար դարերից ի վեր իր հոգևոր ու բարոյական առաքելությունը կը շարունակէ մեր հաւատացեալ ժողովուրդի ծոցին մէջ, ի Հայաստան և ի սփիւռս աշխարհի, վայելելով յարգանքը և գործակցությունը մեր ազգի հաւատաւոր զաւակներին:

Մեր այդ զաւակների հոյլին պատկանում էք Դուք ևս, յարգելի պարոն Գալիկեան, որ անհա երեսունհինգ երկար տարիներից ի վեր աշխատում էք Մայր Աթոռում, անկոտրում կամքով և աշխատասիրությամբ վերանորոգելու համար մեր ճարտարապետական գոհար պատմական վանքերն ու եկեղեցիները, ամենայն հմտությամբ ու ջանասիրությամբ: Մեզ քաջ յայտնի է նաև որ անցեալում ևս Երևանում և այլուր ծրագրաւորուել և կառուցուել են յիշարժան բազմաթիւ կառոյցներ մեր հայրենիքի, շնորհիւ ճարտարապետության մէջ Ձեր ունեցած բազմավաստակ հմտության ու ճաշակին:

Ձերմապէս գնահատելով Ձեր եկեղեցանուէր ու գիտական ծառայությունը, Ձեր ծննդեան ութսունամեակի յիշարժան առթիւ, այսու Հայրապետական Մեր կոնդակով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Ձեզի բերում ենք Մեր օրհնությունը, մաղթելով Ձեզի քաջառողջություն, բազում տարիներ արևոտ ու խաղաղ կեանք, ընտանեկան երջանկությամբ:



Խաչքար—նվիրված Մեծ եղեռնի զոհերի հիշատակին Բաղդադում (Վեհափառ Հայրապետի նվերը Իրաքի հայոց թեմին)

«Ողջ լերուք զօրացեալ Սուրբ Հոգւով և յաւէտ օրհնեալ ի Տեառնէ և ի մէնջ»: Ամէն:

Կարեն Բ.

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ կոնդակս ի 10 Սեպտեմբերի
1992 Փրկչական ամի,
և ի տումարիս Հայոց ՌՆԽԱ
ի մայրավանս Սրբոյ Էջմիածնի:
ՀՄՐ. 1913

Ստորև բերված ցանկում հիշատակվում են բազմավաստակ ճարտարապետ Արծրուն Գալիկյանի գործերը՝ կատարած Մայր Աթոռում պաշտոնավարելիս:

1. Նոր Վեհարանի արմատական վերակառուցում.
2. Հին Վեհարանի արմատական նորոգում.
3. Տպարանի շենքի արմատական վերանորոգում՝ երկրորդ հարկի հավելումով.
4. Ղազարապատ շենքի արմատական վերակառուցում և ամրացում: Առաջին հարկում միաբանական սեղանատան և խոհանոցի, երկրորդ հարկի հավելումով՝ ճեմարանականների հանրակացարանի ստեղծում.
5. Մայրավանքի արևելյան և հյուսիսային (ժամացույցի աշտարակով) նախագծում և կառուցում.
6. Ճեմարանի շենքի ընդարձակում՝ արևմտյան թևի հավելումով.
7. Երեմյան խուցերի վերանորոգում՝ ներքին հարմարություններով լրացում.
8. Ս. Գայանե վանքում՝
   ա. Մատաղատան նախագծում և կառուցում.
   բ. Միահարկ շենքի արմատական վերակառուցում, նկուղային հարկի ստեղծումով.
   գ. Բակում՝ տնտեսական շենքի նախագծում և կառուցում.
   դ. Բակի ցանկապատում և բարեկարգում:
9. Ս. Ծողակաթ վանքում՝
   ա. Եկեղեցու հիմնական վերանորոգում.
   բ. Երիցատան նախագծում և կառուցում.
   գ. Բակի ցանկապատում և բարեկարգում:
10. Էջմիածնի Ս. Աստվածածին եկեղեցում՝
   ա. Հիմնական վերանորոգում.
   բ. Բակի ցանկապատում և բարեկարգում.
   գ. Երիցատան նախագծում և կառուցում:
11. Երևանի Ս. Սարգիս եկեղեցու արմատական վերակառուցում և բարեզարդում, վրան նոր հարկի հավելումով (ճարտ. Ռ. Իսրայելյանի հեղինակակցությամբ):
12. Նորագավիթի Ս. Գևորգ եկեղեցու արմատական վերանորոգում, կտուրին՝ զանգակատան հավելումով:

13. Բամբակաշատի (Արմավիրի շրջան) Ս. Աստվածածին եկեղեցու արմատական վերանորոգում:

14. Հրազդանի Ս. Խաչ եկեղեցու արմատական վերանորոգում, բակում՝ երիցատան նախագծում և կառուցում:

15. Վարդենիսի Ս. Աստվածածին եկեղեցու արմատական վերանորոգում:

16. Երևանում՝ Ս. Սարգիս եկեղեցուն կից առաջնորդարանի շենքի նախագծի բանվորական գծագրերի կատարում:

17. Տնտեսական շենքերի (գարաժի, դիզելատան) նախագծում և կառուցում՝ Մայրավանքի բակում:

18. Խաչքարերի նախագծում Բաղդադի և Մինսկի հայ համայնքների պատվերով:

19. Գևորգյան ճեմարանի շենքի վերանորոգման նախագիծ:

20. Սինոդի շենքի վերանորոգում և հարմարեցում գրասենյակային կարիքների համար: